Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության համալսարանի
ռեկտոր, ԳԽ Նախագահ

_____ Ն. Խ. Սարիբեկյան

«03» 02 2020թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն իրավական ակտը տարածվում է Ավանդական բժշկության համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) աշխատողների՝ ներառյալ էթիկայի հանձնաժողովի անդամների վրա:
2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքով, Համալսարանի կանոնադրությամբ և «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով, «ԱԲՀ ակադեմիական ազնվության» և «ԱԲՀ էթիկայի» կանոնակարգերով:
3. Հանձնաժողովի կազմը ներկայացնում և հաստատում է Համալսարանի ռեկտորը:
4. Հանձնաժողովի կազմը բաղկացած է Համալսարանի 5 աշխատող և սովորող 1 անդամից:
5. Հանձնաժողովի անդամի լիազորությունները դադարեցվում են՝
   - անձնական դիմումի համաձայն,
   - առնվազն երեք անգամ Հանձնաժողովի նիստերին անհարգելի բացակայելու դեպքում,
   - էթիկայի կանոնները խախտելու դեպքում:
6. Հանձնաժողովի աշխատանքների նյութատեխնիկական և կազմակերպական աջակցությունն իրականացնում է Համալսարանի վարչական մասը:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հանձնաժողովի հիմնական խնդիրն է՝ նպաստել Համալսարանում ակադեմիական ազնվության սկզբունքների և էթիկայի կանոնների պահպանմանը:
2. Հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակում՝
   - քննության է առնում իրեն ուղղված հարցերը, տալիս պարզաբանումներ և անում եզրակացություններ,
   - ներկայացնում միջնորդություններ ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված պատասխանատվության միջոց կիրառելու վերաբերյալ.
   - զբաղվում է ուսանողների կողմից ակադեմիական ազնվության խախտումների հարցերով:
   - ակադեմիական ազնվության և էթիկայի կանոնների տարաբնույթ խախտումների դեպքում համալսարանի աշխատակիցների և ուսանողների համար կարող է տալ

տարբեր տեսակի եզրակացություններ՝ առաջարկելով Համալսարանի գիտխորհրդին տալ նկատողություն, արդարացնել, տալ խիստ նկատողություն, հեռացնել համալսարանից:

- Համալսարանի գիտական խորհրդի (այսուհետ՝ ԳԽ) առաջարկությամբ անցկացնում է ուսումնասիրություններ և ներկայացնում պարզաբանումներ կամ եզրակացություններ.
- իր գործունեության վերաբերյալ հաղորդում է ներկայացնում Համալսարանի Գիտական խորհրդին:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՀԱՐՑԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԸ

1. Հանձնաժողովի քննարկմանը կարող են ներկայացվել Համալսարանի աշխատողների և սովորողների կողմից էթիկայի կանոնների և ակադեմիական ազնվության խախտման վերաբերյալ հարցեր:
2. Սույն կանոնակարգի III կետի 1 ենթակետով նախատեսված հարցերը չպետք է առնչվեն քրեական, վարչական և այլ իրավական պատասխանատվություն առաջացնող հարցերի հետ:
3. Հանձնաժողովի քննարկմանը հարցեր կարող են ներկայացնել բոլոր աշխատողները՝ անկախ Համալսարանում իրենց զբաղեցրած պաշտոնից, ուսանողները (ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր):
4. Շահագրգիռ անձը գրավոր դիմումը տալիս է ՄՌԿ և Ընդհանուր բաժին, որն էլ հարցը ներկայացնում է Էթիկայի հանձնաժողովի քննարկմանը:
5. Էթիկայի կանոնների և ակադեմիական ազնավության խախտման վերաբերյալ եզրակացություն տալուց առաջ հանձնաժողովը լսում է դասախոսի և/կամ ուսանողի փաստարկները:
6. Հանձնաժողովում դիմումը պարտադիր ենթակա է քննության այն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում:
7. Շահագրգիռ անձը կարող է դիմել Հանձնաժողովին՝ պարզաբանումներ ստանալու ակադեմիական ազնվության և էթիկայի կանոնների պահպանման վերաբերյալ, որին պատասխանում է երեք աշխատանքային օրվա ընթացքում:
8. Եթե Հանձնաժողովը սահմանված ժամկետում չի ընդունում համապատասխան եզրակացություն կամ տրամադրում պարզաբանում, ապա սույն կանոնակարգի համաձայն ձևավորվում է նոր Հանձնաժողով, որն իր աշխատանքները սկսում է նախկին Հանձնաժողովի կողմից չքննարկված հարցի քննարկումով:
9. Հանձնաժողովը հարցերի քննարկմանը կարող է ներգրավել շահագրգիռ անձանց, մասնագետների և այլոց:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են Հանձնաժողովի կեսից ավելի անդամների նախաձեռնությամբ՝ գրավոր կամ բանավոր դիմումի առկայության պարագայում և իրավազոր են կեսից ավելի անդամների մասնակցության դեպքում:
2. Հանձնաժողովը դիմում ներկայացրած անձից և շահագրգիռ անձանցից կարող է պահանջել ներկայացնել անհրաժեշտ հիմնավորումներ, բացատրություններ,

փաստաթղթեր և այլ հիմքեր, որոնք հնարավորություն կտան պարզել էթիկայի կանոնների խախտման առկայությունը կամ բացակայությունը:

3. *Հանձնաժողովի նախագահը՝*
   - ղեկավարում է Հանձնաժողովի աշխատանքները,
   - հրավիրում և վարում է Հանձնաժողովի նիստերը, կազմում է Հանձնաժողովի նիստի օրակարգը, որոշում նիստի անցկացման վայրը և ժամանակը, ստորագրում է Հանձնաժողովի անունից կազմվող գրությունները:
4. *Հանձնաժողովի քարտուղարը՝*
   - ապահովում է հանձնաժողովի աշխատանքների, նիստերի, օրակարգերի, անհրաժեշտ այլ նյութերի, ինչպես նաև եզրակացությունների, պարզաբանումների և միջնորդությունների նախագծերի պատրաստումը.
   - Հանձնաժողովի անդամներին, այն անձին, ում ներկայացմամբ քննարկվում է հարցը և ում հետ կապված է հարցի քննությունը, ողջամիտ ժամկետում տեղեկացնում է Հանձնաժողովի նիստի օրակարգի, ժամանակի և վայրի մասին.
   - արձանագրում է Հանձնաժողովի նիստերը և ստորագրում այն.
   - իրականացնում է սույն կանոնակարգով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ լիազորություններ:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ

1. Հանձնաժողովը տալիս է եզրակացություն ակադեմիական ազնվության և էթիկայի կանոնների խախտման կամ բացակայության մասին:
2. Էթիկայի և ակադեմիական ազնվության կանոնների պահպանման մասով Համալսարանի աշխատողի, ուսանողի կողմից անհրաժեշտ վարքագիծ դրսևորելու համար Հանձնաժողովը տրամադրում է պարզաբանումներ:
3. Հանձնաժողովի եզրակացությունները և պարզաբանումները ստորագրվում են Հանձնաժողովի նիստին ներկա բոլոր անդամների կողմից:
4. Սույն կանոնակարգով նախատեսված էթիկայի կանոնները խախտած աշխատակիցների նկատմամբ կարող են կիրառվել կարգապահական պատասխանատվության միջոցներ՝ նկատողություն, խիստ նկատողություն և պայմանագրի լուծում:
5. Հանձնաժողովի եզրակացություններն ընդունվում են *կողմ* կամ *դեմ* բաց քվեարկությամբ՝ Հանձնաժողովի նիստին մասնակցած անդամների ձայների մեծամասնությամբ:
6. Հանձնաժողովի եզրակացության հիման վրա համալսարանի Գիտական խորհուրդը կայացնում է համապատասխան որոշում, որը հաջորդ աշխատանքային օրը տրամադրվում է դիմումատուին:
7. Հանձնաժողովի պարզաբանումների հասանելիությունը Համալսարանի աշխատողներին ապահովում է Համալսարանի համալսարանի ՄՌԿ և Ընդհանուր բաժինը:
8. Սույն կանոնակարգը հաստատվում է Համալսարանի ԳԽ-ի կողմից:
9. Սույն կանոնակարգում բոլոր փոփոխություններն ու լրացումները կատարվում են Համալսարանի ԳԽ-ի կողմից համապատասխան որոշմամբ: